

ԻՆՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուր, կէս տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Օտարադարացիք զիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանի րաւին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. Ի

(ՏԵՄԵՐՈՐԻ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոդուկտով ԱՄԵՆ ՕՐ (բացի տոն և տօներէն հետեալ օրերէն):

ՊՐՈԳՐԱՄԱՆ. I. Տեղութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուր, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3 ր., երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուր:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեալ հասցեով. Тифлис, редакция «Мшак».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ազատ ուսում:—Եւ երբեք չէր եղած Նամակ Համախոյ: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Թիֆլիս: Նամակ Թիֆլիսից:—Մշակիչ հեռագիրներ:—Յայտարարութիւններ:—Բանասիրական և արտաքին:

ԱԶԱՏ ՈՒՍՈՒՄ

„ГОЛОСЪ“ լրագիրը իր վերջին համարների բանասիրականներից

ԴԱՆԻԹ ԲԵԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

(1722—1728)

Կանանցի չափանիւնը փոքր ինչ հեռու կազմված էին երկու վրաններ, նրանցից մէկը փառաւոր, ընդարձակ և գեղեցիկ էր, իսկ միւսը փոքր և հասարակ: Առաջինը բարձր, նիզակահաման սիւները զարդարած էին ոսկեգօծ և գոյնըզգոյն նկարներով, ներսը ունէր մի քանի բաժանմունքներ, որ ձեռքնուով էին մի փոքրիկ պալատ իր բոլոր յարմարութիւններով: Այնտեղ կար հիւրանոց, առանձնարան, քնարան, գիւնաստուռ, դանձարան և այլն: Բաժանմունքների վայելչութեան համեմատ, վրանի աստաղը պատած էր քիչմըրի թանգազին շալկով, Սպանանի ոսկեհուռ զարդաքներով կամ Հնդկաստանի մետաքսեայ նուրը գործուածներով: Յատակը պատած էր Ֆերանանի նախուռն գորգերով: Թագաւորական փառքի վայելչութիւն ունեցող այդ վրանը դրանց ֆերուզայի միակերպ գոյն ունէր և կարված էր փաշանի ամուր, անթափանցիկ դարաքից: Նրա միջնասիւնի գլխին ծածանվում էր մի կարմիր դրոշակ, որի վրա նկարված էր մի աջ զաւթաթափէրի որդի Ալիի զօրաւոր ձեռքն էր, որ առաջնորդում էր խանին նրա բոլոր յաղթութիւնների մէջ: Վրանի առջև ցցած էին մի քանի երկաթեայ թափիկներ, որոնց վրա հանդարտ խոհական կերպարանքով նստած էին որսորդական բազէների ամենաբնական տեսակները:

Գեղեցիկ թարման հպարտ վեհաճառութեամբ

մինը կրկին նուիրում է համալսարանական հարցին:

Խօսելով այն խռովութիւնների մասին, որոնք վերջին տասն, տասն և հինգ տարի պատահում էին ուսաց ուսանողութեան մէջ, մայրաքաղաքի թերթի վերաբերում է այդ խռովութիւնները համալսարանական այն խիստ

նայում էր իր չորջր, կարծես, կամենալով ցոյց տալ իր պարանոցի թանգազին մանակը, որ զարդարած էր խոշոր ալմաստներով: Բոլոր բազէները ունէին այսպիսի մանակներ, և իւրաքանչիւրի արժանաւորութեան համեմատ, զարդարած էին գոյնզգոյն գահարներով: Նրանց ոտներին կապած էին ոսկեայ փոքրիկ բոժոժներ, որոնք ամեն մի շարժման ժամանակ ճրնկճրնկում էին, մեղօղիական մեղմ ձայներ էին արձակում: Մի ծիտ, մի աղաւնի օդի միջով անցնելու ժամանակ, նրանք իսկոյն բաց էին անում իրանց լայն թևերը, և նետի նման սլանում էին դէպի վեր, որ բռնեն, որ գիշատեն նրան: Բայց մետաքսեայ ոտնակապը կրկին ցած էր քաշում նրանց և նստեցնում էր երկաթեայ թափիկների վրա: Այս շատակեր թռչուններին շատ չէին կերակրում, և միշտ անդադ էին պահում, որ որսորդութեան ժամանակ աւելի սաստիկ փութակ ունենան բռնելու և գիշատելու: Այսպէս պահում էր խանը և իր ծառաներին, այսպէս պահում էր և իր որսորդական չներին: Այս վերջինները, թէ չները և թէ ծառաները, թիւ չունէին: Այնտեղ կարելի էր տեսնել արագավազ բարակներ, թանգազին վզնոցներով, որոնք նուրը կազմուածքը բազկացած էր միայն ամուր ոսկրներից, զօրեղ մկնակներից և կարճ մազերով պատած կաշուց, կարծես, մեծ մի փոքրիկ քառակուսի անգամ զբաղեցնում էր միայն մէջ կարող էր արգելել այդ թեթևաշարժ անասունների օրնթացութիւնը: Այնտեղ կարելի էր տեսնել փոքրիկ, կատուի չափ, խորամանկ, չարածճի կրկաններ, որոնք ստատապի նման ամեն ծակ կարող էին մտնել, որոնք հոտառուով, կարող էին գտնել թագնված երէի հետքը: Այնտեղ կարելի էր տեսնել լայնակահիւնայ և երօպացի չներ, որոնք թէ ցեղով և թէ սովորութեամբ, ասիականացի էին և աւելի զազանային բնաւորութիւն էին ստացել: Այնտեղ կային թանձր մազերով աճող, գալանման գամիւռներ, որ մի հարուածքով կարող էին ջարդել ամենազօրեղ

սիստեմային, որ մոցրած էր ժողովրդական լուսաւորութեան նախկին միջիտ, կոմս Տօլստոյ: Ուսանողները եւթարկված էին խիստ տեսութեանը, զրկված էին իրանց ներքին պէտքերի մասին հոգալու և խորհրդակցելու իրաւունքից, պրօֆէսորների խումբը զուրկ էր համալսարանական ինքնավարութիւնից, շատ անգամ ընդունվում էին պրօֆէսորների թուում այնպիսի դասատուներ, որոնց հակառակ էր պրօֆէսորների խումբը, բայց անգոր էր մերժել նրանց ընդունելութիւնը իրանց շրջանի մէջ: Փակուլտետի բոլոր առարկաները պարտադիր էին ուսանողների համար և երիտասարդները չէին կարող ընտրել իրանց ընդունակութեան և հասկացողութեան համեմատ ցանկացած առարկան և լսել միայն այն պրօֆէսորների դասատուութիւնը, որ իրանք էին ցանկանում:

„ГОЛОСЪ“ լրագիրը խորհուրդ է տալիս մեր համալսարաններին օրինակ առնել գերմանական համալսարանների կազմակերպութիւնը:

Եղջերուի մէջքը, և իրանց ձանկերի մէջ կառուցված էին խեղդել ամենի վարդին: Ծառաները, թէ իրանց հոգեկան և թէ բարոյական յասկութիւններով ամենին չէին զանազանվում: Ներքին զանազանութիւնը միայն նրա մէջն էր, որ չները որսում էին իրանց նման անասուններ, իսկ ծառաները որսում էին իրանց նման մարդիկ: Ամենի մէջ տիրում էր մի և նոյն անգլիանութիւնը, մի և նոյն զազանային անպարտիւնը արին լսելու...

Բոլոր ծառաները հազած ունէին սև դադաքից աւելաւոր, իսկ նրա վրա տեղային կոշտ մաշուկից կարված, մ ո յ գ մ ի խաղաղութիւնը մէջքները անգամ էր կաշեայ գօտիով զարդարած արծաթեայ կապանքներով, որից քարէ էր ընկած լեկուռ դաշոյնը: Վրաներին դրած ունէին գառան մարմից կարած ահազին փախախներ, իսկ ոտներին հազած ունէին տրիկներ կաշեայ դանակապաններով: Կեղծապարտիւնը, անմաքրութիւնը տիրում էր նրանց վրա: Ինչպէս վայրենի խափշիկները որ և իցէ իւրաքանչիւր բան ուսելու ժամանակ իրանց իւրօր ձեռքերը քսում են մերկ մարմնի վրա, որ օժեն նրան, այնպէս էլ այդ կիսավայրենիները իրանց իւրօր ձեռքերը այնքան քսել էին արիւնքալոյսների վրա, որ նրանց նիւթը կոկիկէր, փայլում էր մուշամբայի նման:

Խանի վրանի առջև տարածված էր ընդարձակ, կանաչադարձ հրապարակ, որի վրա ամբողջված էր, վերվածքում էր բազմութիւնը: Ամենը անհամբերութեամբ սպասում էին խանի դուռը գալու: Ոմանք գործով էին եկած, ոմանք վէճ ունէին, նրանից դատաւճիւռ էին սպասում, ոմանք հեռաքարքի նայողներ էին, իսկ մի մարդ նրա ծառաներն էին, որ սպասում էին, խանը նրանց մի ծառայութիւն յանձնէ, որից կարողանան շահվել:

— Զարբար, ասաց ծառաներից մէկը խանի բազկալիւններից մէկին:— Ես օր խանը շատ ուշացաւ, չէ գուր գալիս:

— Իրա քէֆը չէ, կրք է, այն ժամանակ

նից, համարելով այդ կազմակերպութիւնը աւելի կատարեալ, քան թէ երօպական միւս երկիրների համալսարանների կազմակերպութիւնը:

Ուսումը պէտք է լինի ազատ, ասում է ուս թերթը: Են ժամանակ միայն ուսանողը կարող է իր մէջ անկախ համոզմունքներ մշակել, երբ համալսարանական վարդապետութիւնը կատարելապէս ազատ կը լինի, երբ պրօֆէսորն էլ իրաւունք կունենայ կատարեալ ազատ կերպով յայտնել իր համոզմունքները իր ամբիօնի բարձրութիւնից: Ուսման ազատութեան հետ կապված է և ուսանողի իրաւունքը ընտրել այն առարկան, որ ինքն է ցանկանում, լսել այն պրօֆէսորին, որ ինքն է ցանկանում: Ուսման և դասատուութեան փոխադարձ ազատութեան մէջն է, գլխաւորապէս, պրօֆէսորի և ուսանողի, միմեանց մէջ բարոյական անխզելի կապի գրաւականը, իսկ այդ բարոյական կապը բարերար կերպով ներգործում է երիտասարդութեան ամբողջ ապագայ

կը դուրս գալ, ու է նրան ստիպողը, պատասխանեց Զարբարը, և սկսեց փայփայել լաղէի փետուրները, որ նստած էր նրա, մինչև արմուկը կաշեայ ձեռնոցով նպատած, բազուկի վրա:

Ծառան, նկատելով, որ իր հարցմունքը վատ սպաւորութիւն գործեց բազկալիւն վրա, խօսքը փոխեց, հարցնելով.

— Երբ պիտի բաց անէք այդ լաղէի աչքերը: Եւ իրաւ, բազկէի աչքերը կապած էին մի տեսակ կաշեայ անթափանցիկ անիոցներով, որոնց նմանը կրում են մարդիկ քամու ժամանակ աչքերը փոշուց պահպանելու: Համար, Բազէի դեռ անվարժ էր, այդ դրութեան մէջ նրան պահում էին մի քանի ամիս լոյս և աշխարհ չէ տեսնում, մոռանում է իր վայրենի անցեալը, յետոյ աչքերը բաց են անում, փոքր առ փոքր ընտելացնում են նոր կեանքի, վարժեցնում են որսորդութեան:

Խանի ամբողջ դիւանը հրապարակի վրա սպասում էր նրան: Մի տեղ գետնի խոտերի վրա նստած էր Ֆարրաշաշին (Ֆարրաշների կամ ժողովրդների գլխաւորը) աչքերը արկնում և անդ թուրքաւոր լցված մի մարդ: Նրա չուրջը խմբով կանգնած էին անողորմ ֆարրաշները, ձեռները իրանց դաշոյնի վրա դրած: Գանդապաւորները, հաւաքված անողորմ, աղաղակում էին, խոսքում էին ֆարրաշաշուն, որ իրանց դատը յայտնէ խանին: Ծառանը մօտենում էին, չորում էին նրա առջև, և ականջին փոփոխով, կաշառք էին խոստանում: Մի տեղ նստած էր խանի գլխաւոր մուշուլ-բաշին, այսինքն մի քանիների կամ գրագրների մեծաւորը: Նա մի մաշված, ցամաք մարդ էր, և յաճախ ափիօն ընդունելուց դէմքը դեղնեղ, դալկացել, մուռլի գոյն էր ստացել: Նրա հայտ գօտիի մէջ, առջից իրած թղթերի փաթիլները բովանդակում էին իրանց մէջ խանի ամբողջ արխիւը, որ նա իշ գօտիում էր ման ածում: Այնտեղ էին տուրքերի, հարկերի, հաշիւների, այնտեղ էին պաշտօնական թղթերի օրինակները, այնտեղ էին դատերի, վճիռների

ածնեը զլորվում էին ցած: Մի մարմին ընկ-
ում էր ուրիշ մարմնի վրա և ձևացնում էր զի-
նեղի մեկուսի մարմնակ: Երբ որ

Գժուար է հասկանալ այդպիսի առաջարկութեան արժանաւորութիւնները: Ամենից առաջ գժուար է երեւակայել, թէ նոր կօնֆերենցիան ինչով պէտք է զբաղվի: Կօնֆերենցիային կը մասնակցեն վեց պետութիւններ: Ներկայացուցիչները, որոնք արդէն մի անգամ վճիռ են կայացրել, Յուստանի ներկայացուցիչները, որ համաձայնել է պետութիւնների նախկին վճիռին և թիւքթայի ներկայացուցիչները, որ չեն համաձայնում տալ Յուստանին զրաւել նրան վիճակված երկրներ: Այս պայմանները ի նկատի առնելով՝ նոր կօնֆերենցիայի եօթ անդամները ձայն կը տան յօգուտ Բերլինի կօնֆերենցիայի վճիռի, իսկ մէկը նրա դէմ: Բերլին այդ նոր առաջարկութեանից թիւքթային ինչ օգուտ կունենայ: Ինչն է նրան առիթ տալիս յուսալու, որ նոր կօնֆերենցիան կը ստիպի Յուստանին չափաւորել իր պահանջները:

Վերջապէս ի՞նչ պահանջութիւն կայ, որ նոր կօնֆերենցիայի վճիռները կիրառութենէ: Ենթադրենք, որ եւրոպական մասնաժողովը սահմանագիծը անցկացնելու ժամանակ արգելքներ չի հանդիպի: Այս դէպքում սահմանագիծը կորոշվի, բայց այնուամենայնիւ Յուստանը միջոց չի ունենայ զրաւել իրան առեւծ երկրները: Գուցիւնիսի օրինակը ապացուցեց, որ Բ. Գուռը մինչև անգամ առանց իր զօրքերի օգնութեանը զինուոր կարող է արգելել Յուստանին, որ նա զրաւի իրան վիճակված նահանգները:

Գժուար չէ ուրիշ հասկանալ, որ Բ. Գրաննոր առաջարկութիւնը գիպլոմատիական մի խորամանկութիւն է: Թիւքթայ կառավարութիւնը կամենում է յետաձգել միջնորդ դատարանի կայանալը: Բ. Գուռը յոյս ունի, որ նոր բանակցութիւններ կըսկսվեն, որոնք զօրք կերկարացնեն: Յուստանին հետ զօրք ունենալով, թիւքթայ կառավարութիւնը կարող է յուսալ, որ

աւելի հեշտ կարող էր վառվել: Բողոքի միջոց դեռ լսելի էին լինում խուլ հառաչանքներ, չարժութիւն էին ձեռքեր, որ բարձրանում էին դէպի սառնամանիկ երկնքը... Ենթադրեալ տարածում էր ձեռնկերային խանձանոտութիւնը դէպի ամեն կողմ: Կա մի կատարեալ մարդագործ էր, որ նուիրվում է աստուածներին ամենամաքուրին:

Այլովում էին կանայք, երեխաներ, այրվում էին աղբոսներ և առայդ աղամարդիկ: Այդ սարսափելի ողջակեզ կարող էր ամեն մարդու վրա ստակալի տպաւորութիւն գործել, բայց խանի մէջ նա բարձրացրեց ծիծաղ և մի տեսակ դադանային զուգարթութիւն: Նա առանց ժպտելու չէր կարողանում նայել այդ սիրտ կարատաղ տեսարանի վրա, որպէս Նիւսթը նայում էր Հոսովի հրդեհին: Նա դարձանում էր այդ թշուառների սատանայական հնարագիտութեան վրա, թէ ինչ խորամանկ միջոց էին ընտրել զարմնելու իրանց վրա խանի բարձր ուշադրութիւնը: Նրանք դանդաղորդներ էին: Մի քանի ամբողջ ամիսներ դեգերվում էին խանի չափերի մեթակալքում, բայց ոչ որ թոյլ չէր տալիս նրանց մօտենալ և իրանց դանդաղ յայտնել խանին: Յուստանութիւնը ստիպեց դիմել այսպիսի ստակալի ձեռնարկութեան: Նրանք օժեցին իրանց մարմինը և հաջողութեամբ նստեցին, նրանք անցկացրին իրանց պարանոցը նոյնպէս նաւթի մէջ թափախված հալիւններ, և կրակ առեցին... Այդ բոլորը խիստ ծաղրալարժ էր թւում խանին:

Մարմինները դեռ ձեռնում էին: Թանձր մուկը պատել, պաշարել էր նրանց: Երբեմն միայն բարակ լեզուներին նման յայտնվում էին բողոքի գոճառ չառավիղներ, դողողորում էին, պոռոյովում էին և խկոյն մարում էին ծիւի թանձրութեան մէջ: Գրանը թշուառ գոհերի վերջին բողոքը, վերջին միանշան էին արտայայտում...

Հասարակութեան ուշադրութիւնը այդ միջոցին զարձարւում էր: Դէպի մի մանկաստակ պատանի, որ չը կարողանալով դիմանալ կրակի

եթէ զօրք երկարի, Յուստանին ֆինանսական միջոցները այնպէս կը վատանան, որ նա անկարող կը լինի պատերազմ ըսկսել և այն ժամանակ Թիւքթային կարող է իր ցանկացած գիշուհները միայն անել: Սեժ անխոհմտութիւն կը լինէր թոյլ տալ, որ այդ խորամանկութիւնը կատարվի: Եւրոպան համազգած է, որ յոյն-թիւքթայական հարցը կարելի է միայն միջնորդ դատարանի օգնութեամբ լուծել: Գուցէ այդ միջոցը անաղուութեամբ է ընտրված, բայց քանի որ մի անգամ որոշված է, այլ ևս պէտք չէ յետ կանգնել: Յուստանը չէ կարող սպասել և նրա համար մեծ նշանակութիւն ունի իւրաքանչիւր շաբաթը, որովհետեւ յունական զօրքերը հաւաքված են և նրանց համար մեծ ծախսեր են անվում:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Աւազիւր, նոյեմբերի 14

Աւազին թղթովս գուժեցի ձեզ հայ աղջկայ բնաբարբառն երկու քրդաց կողմէն: Մի յուսաք, թէ սա տարբեր մի երեւութով պիտի ներկայանայ ձեզ և ազիւ ընթերցողացդ, սա ալ գրեթէ նոյնն է ինչ որ էր իր նախորդը, այսինքն մի խոգովական իրողութիւն: Ամաթիւնէս 5 օր առաջ Հոգաբարդի գայմագամ Մուստաֆա Էֆենդի խոստովութեամբ հայաբնակ գիւղը երթալ կուզէ, և իրմէ առաջ ոտովիան մը կը խրկէ գիւղ գալն ծանուցանելու, բայց հոն գտնուող էմլաքի (կալուածոց) երկու տաճիկ պաշտօնատարներ կը գրեն իրեն (գայմագամին), թէ գիւղին մէջ սենեակ չի կայ իր աստիճանին յարմար և վայելուչ, և թէ իրենք արդէն գիւղացւոց հետ ընդ փոյթ կարգադրելու վրայ են: Նոյնպէս և կալուածական գործերն և կաղաչեն գալն երկու օր յետաձգել: Գայմագամն կընդունի դայս, սակայն գիւղը ժամ 2-ի միջոցներն (ըստ թըրքաց) չը գիտեմ որ սատանան կը դրդէ գիւղը ելլել ու գիւղ գալ յանկարծակի և սենեակ պահանջել անպատրաստ գիւղացիներէն: Որք սե-

զարհուրանքին, դուրս էր պոճել իր մօր գրկից և ընկած էր խորոյկից հեռու: Յանկարծ մի մարդ շուտ վրա հասաւ, ճիւղ թղթած իր վերարկուն չափով ծածկեց նրա վրա, և այսպիսով հանգրցեց նաւթի բողոքով բռնկված նրա հագուստից կրակը: Յետ քաշելով վերարկուն, նա սկսեց խնամքով մեղքացնել մանուկին, որովհետեւ կըստաւ: Տաղուտը դարձեալ այրում էր նրա մարմինը: Մազերը և մինչև անգամ աչքերի թերթիւնները բոլորովին խանձված էին: Պատանին ուշաթափութեան մէջ էր գտնվում, բայց կենքի շոյղները խաղաղ անձեռնուցած չէին: Երբեք կաշին այրված էր, իսկ մարմին վրա երեւում էին մի քանի մրկած տեղեր:

Ի՞նչ պիտի անես այդ լակոյտին, Ամէդ, հարցնում էին նրա շրջապատողները:

— Էս նրան կառողջացնեմ և ինձ որդի կը չինես, պատասխանեց ծերունի ներքինապետը ծանրութեամբ:

— Գաւուրին, գոչեցին ամեն կողմից զղուանքով:

— Էս նրան մահմեդական կը դարձնեմ: Թէ և ծերունի Ամէդը հաւատքով ծածուկ քրիստոնեայ էր, բայց այդ խօսքը անց նա իր չըրջապատողների մոլեռանդութիւնը չը գրգռելու համար: Լսելով թշուառ գիւղացիների արկածը, նա շտապեց, և եթէ կարելի կը լինէր, բոլորին օգնութիւն հասցնել: Բայց մինչև իր գալը ամեն ինչ վերջացած էր... Նա կարողացաւ ազատել այդ մահուկը միայն:

Բայց նրանից առաջ, երբ բողոքը ճարակում էին իրանց բոլոր գոնիային արհաւիրքով, երբ գոհերը միմեջում էին, երբ թանձր ծիւի միջոց լսելի էր լինում «գթութիւն... գթութիւն...» հաւաքանքը, — նրանց մօտից անցան հայոց ժողովրդի երկու ներկայացուցիչները: Մէկը Ֆրանգիլը և մէկը Գաւիթը: Երկուսն էլ իսկապէս հասկացան, և երկուսն էլ այդ թշուառներին յուսահատանալու անպատրաստութեանը զրդիչ պատճառները: Մէկը Գաւիթի դէմքի վրա անցաւ տխրութեան մի

նեակ չունենալով կը չուարին կը մնան. գայմագամն զայրանալով սենեակ պատրաստելու համար գիւղին սպասեցնելուն, կը սկսի Գէորդ Գեհան սատակի գանակոծել և գանակոծել տալ, մինչև զի վերաւոր կը փռուի գետին, իսկ իր բարի և հաւատարմի դրացիներէն ալ Յովսէփ Նահապետեան երբ կը վազէ իր դրացւոյն աղա՛ տութեան և միջնորդ կըլլայ աղաչաւոր, «վա՛ր, կաւուրար, սիւղ ազմընընդ, սիւղին ֆիքրինիդ պաշխաղը, կըսէնէնէնիդ վար հէ, ետթըրն շու կըստուրու կըսէ գայմագամն և կը հրամայէ իր մարդոց, որք գազանական վայրենութեամբ կը թափին խեղճ Յովսէփի վրայ և նորա գորաւոր գիւղացիներէն վրայ առաւել կատաղելով՝ ականջներէն կը խաճնեն ու կը ձգեն գետին: Խիստ սոսկալի կը պատմեն այս գազանական տեսարանն, ուր կանայք ու աղաչը կը լսն ու կաղաղակեն իրենց գիւղի մեծաւորի աղաւաթութեան համար, սակայն գայմագամի սպասաւորք սուր բանալով կը յարձակին նոցա վրայ:

Գանակոծեալներն բաւական ծանր կերպով վերաւորուած են, այնպէս որ հազիւ վեց ամսէն կը բուժի նոցա վերքերն, զի լուծքի փայտերով և հաստ բեկերով են ծեծուած. մարմիններն բոլորովին կապուեցած է:

Ալ դիւրին է ձեզ գուշակել, թէ ինչքն չեն պատաներ և քրդաց կողմէն, երբ մի պաշտօնական մարդ, որ իր ակի մէջ պիտի վարէ ժողովրդեան անդորութիւնն և հանգստութիւն, մի վայրագ և ապերաստ գործով լուելայն կը քաջալերէ գիւղին: Երբ տեսնեն զայս քուրդի, որք արդէն փքացած են կարի՝ Շէյխի արշաւանօք, առաւել պիտի սրտապնդին բարդելու չարիս ի վերայ չարիս, հաստառապէս հաւատալով, թէ Շէյխ Պարսկաստանի յաղթելէ վերջ անշուշտ այս կողմեր պիտի վերադառնայ ձմեռելու և զիրենք պաշտպանելու սահմանը կ'աւելցնէ և ալ արշաւանքէն:

Իսկամբ առհասարակ սկսած են խեթիւ և մահաւոր նայել հայոց վրայ, որք, արդարեւ, թուրքսիրտ չեն անչափ, բայց անգին, անհաց, անդրամ, և անառաջնորդ են, և այս բոլոր չըզոյսութիւնը միանալով այս յարմար և պատուական երկրի ժողովրդեան վրայ, թուրքսիրտ երեւելու չափ վնասողեցած են գիւղինը:

Կառավարութիւնը ամէնայն խստութեամբ տուրքերը կը հաւաքէ առանց խնայելու սովիալ ժողովրդին, որոյ վրայ հարկ էր տանել ինամ հայրագործով, սակայն ուլ չի գիտեր թէ թրքին

ամպ, նա ամբողջ մարմնով սոսկաց, սիրտը բաւական դողողալ և ոտքերը սկսեցին կարկամել: Այդ խօսքի և ցաւակցութեան զգացումները չէր որ այսպէս շանթարեցնէ նրան. դա եղեռնագործի, դա չարագործի էր այն սոսկումն էր, որի դադանային խուրովութիւնը անցնելուց յետոյ, յանկարծ տեսնում է իր աչքի առջև անմեղ գոհերը... և նոր է հակառակում յանցանքի մեծութիւնը: Իրանց անձը այրողները տաթկացիներ էին, մէկը Գաւիթի կառավարութեանը յանձնված հարստահարեալներ էին: Ընթացողը այն աստիճան կողոպտել էր նրանց, այն աստիճան ծանրաբեռնել էր զանազան տուրքերով, որ վերջին ժամանակներում անկարող էին վճարել: Չարագործը նախ սկսեց ծախել տալ նրանց անային կարասիքը, անասունները, իսկ երբ դրանք էլ սպառվեցան, սկսեց այնուհետեւ վաճառել նրանց դաւաճները մահմեդականներին: Մի այսպիսի բարբարոսութեան անկարող էր համբերել լազաքը և ապրուստի ամեն միջոցներից զրկված գիւղացին: Նա սովորած էր ինչքի և կաթի հարստահարութեան, բայց իր սրբելի գաւառիկների մահմեդական դաւաճուն չէր կարող համբերել: Նա աւելի բարեւոր կը համարէր, որ նրանք մեռնէին, ոչնչանային, քան թէ կընսան կատարեալ գազանութեան էին հասնում: Նա անշուշտ էր հայերին աւելի քան մի թուրք, մի պարսիկ, կամ մի այլ մահմեդական: Անձաբացած ժողովուրդը կանխում էր դիմել խանին, յայտնել իր ցաւերը և արդարութիւն պահանջել: Ժողովուրդը յոյս ունէր, որ բռնակալ խանի մէջ կը գտնէ աւելի գութ, աւելի մարդասիրութիւն, քան թէ մի հայ դաւաճանի մէջ, որ փառքի և պաշտօնի համար վաճառել էր մինչև անգամ իր կրօնը: Բայց խորամանկ մէկըրդ այնպէս փակել էր բոլոր խառքերը նրանց առջև, որ ոչինչ հնար չէին գտնում իրանց բողոքը հասցնելու խանի ականջին: Այնպէս ֆարաբաշխից մինչև վերջին ծառայողը կաշառված էին

մէթոքն է՝ ի յաւիտեանց անտի՛ բողոքը խուղել առանց միին խաբելու:

Կառավարի փաշան որ գիտնուի, ներգաւոր և քրիստոնէից հակառակ մը պաշտօնատար է, տեղի առաւ ժողովրդեան կարծեաց թէ ուսումնայք կուգան. և Ս. Յովհաննէ (Խաչիլիսէ) գրան քովի մի քանի ուսումնայ ուսուսողներ (կամ նոյն գրակով մարդեր) տեսնելով՝ գրեց կուսակալին թէ յեղափոխութիւն կայ, զոր զսպելու կամ արգելելու համար կարեն հեծկազօր և հետեակ 3000-էն աւելի զօրաց կը սպասուի. ժողովուրդը ընտա չի յուսար թէ այսպիսի մի հեռաւոր խորչի մէջ այդ կանծաւոր զօրքերն պաշը—պօղուքներն ու է տարբերութիւն ունենան: Սովե կամաց կամաց կը կատարի, այս ձմեռ աւելի ծանր պիտի ըլլայ: Կառավարիչը բողոքականաց կողմէն եկող սովիւրց գործակալն արգելեց իր պաշտօնի գործարքելէ, առ ոչինչ համարելով կարոյ՜ Բրիտանական քրդասէր հիւպատոսին յանձնարարապիւրն:

Անցորդ

ՄՇԸՄԻ ՀԵՌԵՒԻՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 24 դեկտեմբերի: Երէկ թագաւոր Կայսրը ընդունեց յայտնի ճանապարհորդ Նորդենշլիդին: „Новое Время“ հաղորդում է. տարածված լուրերը լովկասեան ֆոխարքայութիւնից երկու գլխաւոր նահանգապետութիւն կազմելու մասին տարածում են:

10 ՆՆՈՆ, 24 դեկտեմբերի: Երէկ կառավարութիւնը նիստ ունեցաւ իրանդական գործերի վերաբերութեամբ, որին մասնակցեցին բոլոր մինիստրները:

ԿԱՊԵՏԱՄ, 24 դեկտեմբերի: Բօերների գինաւորված խուճերը մտան Նատալ, որպէս զի խանգարին անգլիական զօրքերի շարժմանը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մէլիքից, որ այդ գիւղացիներին թոյլ չը տան խանին մօտենալ: Մի երկուրում, ուր ամեն գատ կատարվում էր բերանացի, կամայական կերպով, ուր դատաւորը մատչելի չէր ամենին, ուր ամեն գործ ընկնում էր լոկ խօսքերով միայն,—այսպիսի հանգամանքներում գրանիկներին բարեխոսութիւն կամ նրանց չարախօսութիւնը, ի հարկէ, մեծ նշանակութիւն կարող էր ունենալ գանդաւաւորների վերաբերութեամբ: Գրանիկները կարող էին դէպի ամեն կողմ ծուկ դատաւորի կամքը, որը մի և նոյն ժամանակ ժողովրդի տէրն էր: Գրանիկները կարող էին գործը այնպէս սարքել, որ իշխանը ամենին տեղեկութիւն չը տոնարար, թէ ինչ է կատարվում ժողովրդի մէջ: Չարաղացեց անկարողութիւնները կառավարութեան մէջ, միշտ ծնեցնում են ծաղրայեղ միջոցներ նրանց բառնալու համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արգարութիւնը վերականգնելու համար: Բայց զրա համար ժողովրդի մէջ բաւական կենք և բարոյական ուժ է հարկաւոր: Այդ ժամանակներում ժողովրդի մէջ, Չարաղացեց անկարողութիւնները կառավարութեան մէջ, միշտ ծնեցնում են ծաղրայեղ միջոցներ նրանց բառնալու համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արգարութիւնը վերականգնելու համար: Բայց զրա համար ժողովրդի մէջ բաւական կենք և բարոյական ուժ է հարկաւոր: Այդ ժամանակներում ժողովրդի մէջ, Չարաղացեց անկարողութիւնները կառավարութեան մէջ, միշտ ծնեցնում են ծաղրայեղ միջոցներ նրանց բառնալու համար, այն է ոչնչացնել անիրաւ իշխանութիւնը արգարութիւնը վերականգնելու համար:

(Ըր չարոնակովի)

